

Քիւ 26551
Նոյեմբեր 18, 1979

Արժանաշնորհ
Տ. Դերենիկ ԲՆՆյ. Գոնարալեան
Հովիւ Ս. Գէորգ Նկեղեցւոյ
Նախագահ ժխական Խորհուրդի
Հիւսթըն.

Սիրելի Տէր Դերենիկ,

Ստացած ենք Հոկտեմբեր 25, 1979 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ ժխական Խորհուրդիդ երկու անդամները, Փօլ Գարամանեան եւ Յասմիկ Մաւուլեան, երբ ամիսներ շարունակաբար բացակայած են Խորհուրդիդ ժողովներէն: Յասմիկ Մաւուլեան տուած է իր հրաժարականը:


Այսու գիրով կը հաստատենք Հայկազ Օհանեանը որպէս անդամ ժխական Խորհուրդիդ, հրաժարեալ Յասմիկ Մաւուլեանի տեղ՝ մինչեւ ավարտոււմը անոր շրջանին, ըստ Քեմական Կանոնադրութեան:

Իսկ Փօլ Գարամանեանի պարագային՝ կը յանձնարարենք որ ժխական Խորհուրդդ գրաւոր կերպով անոր ուշադրութեան յանձնէ որ երկար շրջանէ ի վեր կը բացակայի ժողովներէ եւ պաշտօնապէս գինը հրաւիրէ ներկայ գտնուելու ժխական Խորհուրդի յաջորդ նիստին: Եթէ ան շարունակէ բացակայիլ՝ այն առեւ կարելի կ'ըլլայ քինք հրաժարած նրկատել:

Ստացած ենք Սան Անթոնիոյի առժամեայ ժխական Խորհուրդի նամակը եւ վաւերացուցած ենք անոր անդամները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



ՍՈՒՐԲ ԳԵՌԳ ՂԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ԴԵՐԵՆԻԿ ՔԶՆՑ • ԳՈՆՏՐԱԼԻԱՆ, Հոլիւ

ST. GEORGE ARMENIAN CHURCH ● RECTORY ● 15119 WELLMAN LANE ● HOUSTON, TEXAS 77060
FR. TERENCE KONDRALIAN, Pastor TELEPHONE 713/448-9686

Հոկտեմբեր 25, 1979

Գերաշնորհ
Տէր Պորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Առաջնորդ Հայաստանեայց Եկեղեցւոյ
Հիւսիսային Ամերիկայի Թեմին

Սրբազան Հայր

Երեքշաբթի, Հոկտեմբեր 23ին տեղի ունեցաւ մեր եկեղեցւոյ ծխական խորհուրդի ընկանոն ժողովը: Ժողովին ներկայ էին ձէյմզ Պոյաճեան, Յովհաննէս Հէքիմեան, Ստեփան Սաքսէնեան, Զաւէն Քրրքաշարեան եւ Փիթըր Պասրալեան: Ի պաշտօնէ նախագահեցի ժողովին: Ժողովին բացակայ էին Կարապետ Քերամեան, Զանի Օհանեան, Փօլ Գարամանեան եւ Յասմիկ Մաւուլեան:

Կարապետ Քերամեան եւ Զանի Օհանեան բացակայ էին կամքէ անկախ պատճառներով, նախորոք անոնք խօսած էին առենապետի հետ եւ բացատրած իրենց բացակայութեան պատճառը:

Փօլ Գարամանեան եւ Յասմիկ Մաւուլեան երեք ամիսներէ ի վեր շարունակական կերպով բացակայած են ծխական խորհուրդի ժողովներէն: Ձէյմզ Պոյաճեան որպէս առենապետ՝ ծխական խորհուրդի կողմէ պատուիրուած էր խօսիլ իւրաքանչիւրի հետ եւ բացայայտել իրենց բացակայութեան պատճառը:

Յասմիկ Մաւուլեան կը տառապի անտանելի գլխացաւէ, անոր քուժման շրջանը անորոշ լինելով ան պաշտօնական կերպով խնդրեց ծխական խորհուրդէն զինք հրաժարեալ նկատել: Ծխական խորհուրդը ընդունեց իր հրաժարականը ներկաներու ամբողջական քուէարկութեամբ:

Փօլ Գարամանեան չէ ուզած տալ որեւէ մէկ ընկանոն պատճառ հակառակ անոր որ ինք է պաշտօնական քարտուղարը ծխական խորհուրդի. ան թերացած է իր պաշտօնին մէջ եւ պատճառ դարձած ժողովներու առենագրութեանց ոչ կանոնաւոր արձանագրման: Ան չէ համաձայնած հրաժարիլ միեւնոյն ժամանակ նոյնիսկ ժխտած է մասնակցիլ յաջորդին կատարուելիք ծխական խորհուրդի ժողովներուն: Ծխական խորհուրդը ամբողջական համաձայն քուէարկութեամբ որոշեց զինք հրաժարեալ նկատել եւ այդ հարցը ձեր ուշադրութեան յանձնել եւ ապա սպասել ձեր կողմէ արդար կարգադրուիլուն:

Անցնող Փետրուարի ծխական Անդամական ժողովին, յաջորդ առաւելագոյն քուէ ստացողներն են Յովհաննէս Ֆրանքեան, Ստեփան Նազարեան եւ Հայկազ Օհանեան: Առաջին երկուքը յանձն չառին ստանձնել ծխական խորհուրդին ծառայելու պաշտօնը, իսկ Հայկազ Օհանեան յօժար է պաշտօնավարելու ձեր կողմէ վաւերացուելէ ետք միայն:

Մեր եկեղեցւոյ համայնքը հետզհետէ կը մեծանայ եւ նոյնպէս անոր պահանջներն ու պատասխանատուութիւնները. կարիքը ունինք նուիրուած ու եկեղեցասէր անձերու որոնք միեւնոյն ժամանակ ունին աշխատելու եւ առաջնորդելու տաղանդները: Ծխական խորհուրդը կը խնդրէ ձեզմէ որ Վարդգէս Թախտաճեանը նշանակուի ծխական խորհուրդի անդամ, ամբողջացնելու Փօլ Գարամանեանի պաշտօնավարման շրջանը:


Վերոյիշեալ պարագաները կը ներկայացնենք ձեր ու թեմական խորհուրդի հայեցողութեան ու պաշտօն կարգադրման:

Մի ուրիշ խնդրոյ առարկայ եւս կը ներկայացնեմ ձեր ուշադրութեան, այն է՝ ծխական խորհուրդի անդամներուն եկեղեցւոյ արարողութեանց ոչ յաճախակի մասնակցութեանց հարցը: Կարող եմ թուել կիրակիներ իրեց թուկաններով, երբ ոչ մէկ ծխական խորհուրդի անդամ ներկայ էր Սուրբ Պատարագի արարողութեան: Բազմիցս ակնարկած եմ ծխական խորհուրդի անդամներուն պաշտօնական կերպով ծխական ժողովներու ընթացքին եւ թէ անպաշտօն կերպով անհատական մեր խօսակցութիւններու ընթացքին եւ այս ուղութեամբ յայտնած իմ մտահոգութիւնս: Մի քանի անգամներ զգուշացուցած եմ այս մասին տեղեկացնել Առաջնորդ Սրբազան Հայրն ու թեմական խորհուրդը եւ հակառակ այս բոլորին տակաւին կը բացակային:

Հինգշաբթի, Հոկտեմբեր 4ին, Սան Անթօնիո քաղաքի նորընտիր ծխական խորհուրդէն ստացայ այս նամակը զոր ներփակ պիտի գտնէք, ուր զիս տեղեկ կը պահեն ծխական խորհուրդի պաշտօնեաներու ընտրութիւնները. ես իմ կարգին այս կը ներկայացնեմ ձեր ուշադրութեան ու վաւերացման:

Կը յուսանք դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ձեր առաքելութիւնը անցաւ քաջալերիչ ու արդիւնաբեր. կսպասենք ձեր հաղորդակցութեանց: Ընդունեցէք մեր բոլորին յարգանքներն ու որդիական սէրը եւ մենք կ'աղօթենք որ բարձրեալն Աստուած ձեզ պարգեւէ հոգւոյ եւ մարմնոյ առողջութիւն որ մեզ ու ամբողջ մեր թեմը առաջնորդէք դէպի խաղաղ նաւահանգիստ:

Մատչիմ ի համբոյր ձեր աջոյն



Դերենիկ ԲՆՆ. Գոնտալեան

Հովիւ